

- 156 Թեոյ հասեալ ժամ պաշտօնի,
 Ժամերգութեան երեկոյի,
 Ամբօխ է՝ իշխանք նոյն տաճարի,
 Հաւաքէին ի սրբահի:
- 157 Թորոց Սարգիս ի տուն կոչէր,
 Զանձինս ոմանս իրաւասէր,
 Որոց պատմէր որ դիպեալն էր,
 Եւ թէ զի՞ զայն ըստուգեալն էր:
- 158 Զայն լուեալ նոյնք՝ զայրանային,
 Ողջ երիցանց ըսպառնային,
 Վանեւ անտի բոլորովին,
 Զեկս յերիցանց անդ խընդրէին:
- 159 Իսկ սրբոց այնց բարկութիւն
 Փսխէր մեղմով յանդորութիւն,
 Ուր է՝ երիցունք հասեալ համբուն՝
 Խընդրէին փոյթ ըզլծողութիւն:
- 160 Զաղմուկս ապայ ողջ հանդարտէր
 Պատրիարգըն խաղաղասէր,
 Որ ըզՍարգիս մըխիթարէր,
 Եւ երիցանցն ուժգին սաստէր:
- 161 Ի նոյն ամի յերուսաղմայ
 Երթեալ հասի ի Բիւզանդիայ,
 Ընդ ռաբունւոյն Յովակիմայ,
 Արդ Պատրիարգ Սուրբ Յակոբայ:
- 162 Առ որ կացեալ եւս վեց ամիս
 Ի կոստանդեան ազնիւ Պօլիս
 Զատեալ անտի ըստ իմ՝ սրբոխս՝
 Նըստայ ի տան հարազատիս: